

ԿՐՕՆԱԿԱՆ-ԲԱՐՈՅՆԱԿԱՆ

«Մի երկնչիք, զի աւատիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն, զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ. որ է Օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի»։ (Ղուկ։ Բ. 10)։

Այսօր տօնու՞մ ենք մենք մեր Փրկչի ծննդեան տօնը։ Այս տօնը սկիզբն է մեր եկեղեցւոյ միւս բոլոր տօներին։ Եթէ մենք իրաւունք չունենայինք այս տօնը կատարելու, այն ժամանակ մեր եկեղեցւոյ միւս բոլոր տօներն էլ անկատար կը մնային։ Ի՞նչ եմ ասում, եթէ Քրիստոս ծնուած չլինէր, գուցէ աշխարհս ևս գոյութիւն չունենար, որովհետեւ Ամենակարողի վրէժխնդիր ցառումը աշխարհս իւր մեղքերի մէջ ոչնչացրած կլինէր։ Սակայն, փառք Աստուծոյ, մեր Տէրը ծնուեց. «Փառք ի բարձունս Աստուծոյ», մեզ համար Փրկիչ է ծնուել։

Մեր աշխարհում այս տօնի նշանակութիւնը շատ յարմարում է ժամանակի հետ։ Այժմ մեզ մօտ օրերը կարճ են և գիշերները երկար։ Ճիշտ այդպէս էր և այն ժամանակ երբ Քրիստոս ծնուեց։ Այդպէս է նաև իւրաքանչիւր այն մարդու սիրտը, որը չէ լսել Քրիստոսի ծննդեան մասին։ Խաւար է պատել այժմ երկիրը, խաւար է պատել նաև շատ ժողովրդների և շատ սրտերի։ Նրանց սրտերի մէջ դեռ ևս ձմեռ է, մինչև որ արգարութեան արեգակը կը բարձրանայ։ Իսկ կեանքի արեգակը իւր երեսն արդէն դէպի մարդկային խեղճ ցեղն է դարձրել։ Ինչպէս որ արեգակն այժմ սկսում է կամաց կամաց երկրին մօտենալ, որովհետեւ ամենակարճ օրն արդէն անցել է, այնպէս էլ Քրիստոսի միջոցաւ Փրկութեան Արեգակը դարձաւ և մօտեցաւ աշխարհին,—ամեն բան կենդանացնող, լուսաւորող, տաքացնող արեգակը, առանց որի ամեն բան մեռած ու մեղքերի մէջ քարացած է։

Օ՛, սիրելի ժողովուրդ, զրպիսի մեծ բարիք է կատարուել մեզ համար, որ Աստուծոյ Որդին մարդ դարձաւ:

Ի՞նչպիսի երկար ժամանակ բաւական կարող է համարուել այս բարերարութեան մեծութիւնն, այս անասելի Աստուծոյ յաւիտենական գթասրտութիւնը ըմբռնելու ու հասկանալու համար: Ո՞րտեղից պէտք է հրեշտակները այն ճշմարիտ խօսքերը վերցնէին Աստուծուն, Քրիստոսի միջոցով յայտնուած յաւիտենական ողորմածութեան համար փառաբանելու Սակայն մենք ևս կոչուած ենք Աստուծուն փառաբանելու, և մենք աւելի պատճառ ունինք դրա համար, ինչպէս և նրանք, որոնք Աստուծոյ երեսը տեսնում են:

«Մի վախենաք, տեսէք, ես ձեզ աւետում եմ մի մեծ ուրախութիւն, որ բոլոր ժողովուրդների համար է, որովհետեւ այսօր ձեզ համար Փրկիչ է ծնուել»:

«Մի վախենաք», այսպէս սկսեցին խօսել հրեշտակները սարսափահար եղած հովիւների հետ, — «մի վախենաք», Թէ ինչո՞ւ հովիւները վախեցան. դա իւր պատճառն ունի, որովհետեւ աւետարանի մէջ ասուած է. «Եւ ահա Տիրոջ հրեշտակները իջան երկնքից նրանց մօտ և Տիրոջ լոյսը փայլեց նրանց վրայ»: Հովիւները ամենայն հանդստութեամբ հսկում էին դաշտում մակաղած իրանց ոչխարներին: Այս առաջին գիշերը չէր, որ նրանք դուրսն էին անցկացնում և նրանց հետ երբէք ոչ մի բան չէր պատահել: Եւ յանկարծ նրանց շորս կողմը երկնային մի լոյս է սփռւում: Կարծէք, արեգակ ծագեց կէս գիշերին: Տիրոջ լոյսը փայլում է նրանց վրայ և երկնքից նրանց մօտ մի պատգամաւոր է գալիս: Որովհետեւ մեր մարմինը մեղքի ենթակայ է, ուստի և նրան կտրող է երկիւղ աղդել այն, ինչ որ վերին անմարմին աշխարհից է գալիս: Այդ պատճառով էլ հրեշտակների առաջին խօսքը լինում է: «Մի վախենաք»: Սակայն, ինչպէս որ Փրկիչը ծնուեց ոչ միայն հովիւների համար, որոնց առաջին աւետիքը տրուեց, այլ ամբողջ մարդկութեան համար, ուստի և հրեշտակների վերոյիշեալ խօսքը վերաբերում է ամբողջ մարդկութեանը. «Դ՛նք, մարդու որդիք, մի վախենաք»:

Սկսած այն օրից, երբ Ադամը առաջին մարդը մեղք գործեց և իւր հետ իւր ամբողջ սերունդը մեղքի տակ ձգեց, այդ օրուանից սկսած ապրում է մարդ երկիւղի ու վախի մէջ, քանի որ Քրիստոսի միջոցով հաշտութիւն չէ ստացել։ Նա վախենում է Աստուծուց, ինչպէս մի չարագործ մարդ դատաւորից։ Իւրաքանչիւր մարդու, նոյն իսկ ամենամանկիւրժ մարդու մէջ մի ներքին զգացում կայ, մի երկիւղի զգացում՝ դատաստանի, որը աւելի մեծանում է երբ բնութիւնն ևս իւր գոգազդութիւնները բերում է մարդու գլխին։ Քանի որ մարդ Աստուծոյ առաջ մեղք չէր գործել, երկիւղ չունէր, վախ չունէր, իսկ մեղսագործութիւնից յետոյ ամեն բանից վախենում է, որովհետեւ խիղճը խայթում է նրան։ Նայեցէք մեր առաջին ծնողներին դրախտի մէջ. երբ նրանք մեղք գործեցին և Աստուծոյ օտի ձայնը լսեցին, նրանք թաքկացան. և Աստուծոյ խօսքին Ադամը պատասխանեց. «Տէր, լսեցի օտիդ ձայնը և վախեցայ»։ Տեսէք, ահա այս է մեր դրութիւնը։ Այդպէս է գրուած մեր ներսը, մեր սրտի մէջ։ Եւ մինչև որ մարդ խաչի վերայ բարձրացած Քրիստոսի միջոցով հաշտութիւն չէ ստացել, նա կմնայ երկիւղի մի ստրուկ Աստուծոյ առաջ։

«Մի վախենաք», այսպէս է սկսում Քրիստոսի ծննդեան ուրախալի լուրը։ Մի վախենաք, ով հովիւներ, մի վախենաք, դու, Իսրայէլի ժողովուրդ, որ երկար ժամանակից ի վեր Աստուծոյ բարկութեան տակ ես գտնւում, մի վախենաք, ով մեղաւորներ, դուք, ով ժողովուրդներ, որ մեղքը իբրեւ շապիկ հագել էք. դուք, ով մարդիկ, որոնց համար Մովսէս մի անգամ դաւաղան կոտրեց, մի վախենաք։

Մեր Տիրոջ ծնունդը ոչ թէ երկիւղի, այլ ուրախութեան օր է. «ահա ես աւետում եմ ձեզ մի մեծ ուրախութիւն»։ Սակայն այդ ուրախութիւնը ոչ միայն ձեզ համար է, այլ ամբողջ Իսրայէլի, բոլոր հեթանոսների համար է։ Այդ ուրախութիւնը պիտի քարոզուի աշխարհից աշխարհ։ Ի՞նչ է աշխարհս առանց այս խօսքի, իրօք, ոչ


այլ ինչ է նա, եթէ ոչ թշուառութեանց մի վայր: Նայեցէք ձեր շորս կողմը, կայ արդեօք մի գիւղ, մի քաղաք, մի տեղ, մի տուն, մի ժողովուրդ, որ թշուառութեանց տակ չլինի: Կայ արդեօք մի տեղ, ուր մարդու սիրտը ազատ չունչ քաշել կարողանայ: Եւ ահա, մեզ, խեղճ մարդկանցս է ուղղուած հրեշտակի խօսքերը. «մի վախե՛նաք, ահա աւետում եմ ձեզ մի մեծ ուրախութիւն»:

Սակայն ինչպիսի մեծ ուրախութիւն է, Արդեօք մեզ մեր խեղճութիւնից պիտի ազատէ՞ և կամ մի ժառանգութիւն պիտի ստանանք, թէ մի ճաշկերոյթի պիտի հրաւիրուենք ու ոչինչ չլծարենք: Սակայն դրանցից և ոչ մէկը. «ձեզ համար այսօր Փրկիչ է ծնուել»: Արդեօք դու, որ ժողովուրդ, պատրաստ ես հովիւների հետ այդ ուրախութեանը մասնակից լինելու, արդեօք քո սիրտդ քնց է նորածին Փրկչին իւր մէջ ընդունելու և նորան պատսպարելու: Արդեօք դու, որ տառապեալ ժողովուրդ, զգում ես, որ այսօր քեզ համար Փրկիչ է ծնուել:

Ձեզ համար է, որ թշուառութեան և նեղութեան մէջ ընկած հոգիներ, ձեզ համար որ երիտասարդներ, որ անմիտ պարերի, հաճոյքների ու կեր ու խումի մէջ էք անցկացնում ձեր օրերը, լսեցէք, ձեզ համար է ծնուել այսօր Փրկիչը, որ ձեզ ազատել կարողանայ ամեն տեսակ թշուառութիւնից ու բաղդաւոր դարձէ: Ահա քո Փրկիչդ ու ողորմած Տէրդ, նա քո մարմինդ ու արիւնգ է ստացել, թէև միևնոյն ժամանակ նա Աստուծոյ յաւիտենական Որդին է: Նա մի խեղճ երեխայ է դարձել, թէև միևնոյն ժամանակ նա Տէր է ամբողջ աշխարհի. նա անարգուել ու աննշան է դարձել. նա անասունների այրումն է ծնուել և մասերի մէջ դրուել, աղքատիկ բարուրի մէջ փաթաթեցին նրան, որ փառակից է Հօրը նախ քան աշխարհ ստեղծելը: Ո՛րքան մեծ է Աստուծոյ սէրը մեզքի տակ թմրած մարդկային ցեղի նկատմամբ: Սակայն մեր այդ անկեալ դրութեան մէջ անգամ, որքան սիրեց մեզ Աստուած, որ մեզ համար եկաւ և ծնուեց: Եկէք, սիրելի ժողովուրդ, սիրենք այդ Աստուծուն, որովհետև առաջ նա

սիրեց մեզ, եկէք, մենք ևս մեր ձայնը միացնենք հրեշ-
տակների ձայնին և երգենք. «Փառք ի բարձունս Աստու-
ծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Գերմաներէնից թարգ. Արսակ վարդապետ



ԾՆՆՆԵԱՆ ՏՕՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԷՁ

(Баку)

... Հայերի մէջ Ծնունդն ու Մկրտութիւնը մի և
նոյն օրը միասին, այսինքն յունուարի 6-ին տօնելու սո-
վորութիւնը ունի իւր պատմական հիմքը:

Ինչպէս վկայում են հայ եկեղեցու հայրերը և միւս
ազգերի ժամանակագիրները, քրիստոնէութեան առաջին
դարերում մինչև 5-րդ դարի սկիզբը այն ժամանակի
քրիստոնեայ բոլոր ժողովուրդները Քրիստոսի Ծնունդն ու
Մկրտութիւնը Հայերի պէս կատարում էին մի և նոյն
յունուարի 6-ին, Յետոյ մի քանի պատճառների հետեւան-
քով, այս կրկնակ տօնը բաժանուեց երկու առանձին տօ-
ների. Մկրտութիւնը յունուարի 6-ին, իսկ Ծնունդը տե-
ղափոխուեց դեկտեմբերի 25-ը:

Երուսաղէմի քրիստոնեաները նախկին կարգը փո-
խեցին այն պատճառով, որ նրանք մի և նոյն օրը պէտք է
կատարէին Ծննդեան տօնը Բեթղեհեմում, իսկ Մկրտու-
թեանը՝ Յորդանան գետում, որը շատ դժուարին էր լի-
նում, յիշեալ սուրբ տեղերի միմեանցից հեռաւորութեան,
ճանապարհների վատութեան և ձմրան ցրտերի պատճա-
ռով: Դրա համար Ծնունդը բաժանեցին Մկրտութիւնից
և տեղափոխեցին դեկտեմբերի 25-ը, որ հնար ունենան
այս տօները առանձին, պատշաճաւոր հանդիսաւորու-
թեամբ կատարել, ճոխ հանդերձանքով: